Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանը հայտարարում է արտաքին մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 96-3.4-Մ3-2) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 96-3.4-Մ3-2) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկությունը ներառված է պաշտոնի անձնագրում:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 96-3.4-Մ3-2) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է էլեկտրոնային եղանակով Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կայքէջին՝ https://cso.gov.am/, ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (ձևը լրացվում է էլեկտրոնային եղանակով),
2. անձնագրի և/կամ նույնականացման քարտի լուսապատճենները (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանքի կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանքի լուսապատճենը),
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի լուսապատճենը,
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի լուսապատճենը,
5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի՝ գրառում արված բոլոր էջերի լուսապատճենները կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի լուսապատճենը,,
6. մեկ լուսանկար՝ 3X4 չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են էլեկտրոնային եղանակով՝ Քաղաքացիական ծառայության գրասենյակի կայքէջի՝ https://cso.gov.am/ միջոցով: Էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է այցելել https://cso.gov.am/ կայքէջի «Գլխավոր» էջի «Մրցույթների հայտարարություններ» բաժնի «Գլխավոր քարտուղար» ենթաբաժին: Ծանոթանալով մրցույթի մասին հրապարակված հայտարարության բովանդակությանը և տվյալ պաշտոնի անձնագրին՝ քաղաքացին կարող է հայտարարության տեքստի վերջում նշված «Դիմել» ստեղնի օգնությամբ ներկայացնել էլեկտրոնային դիմում: Սեղմելով «Դիմել» ստեղնը՝ բացվում է «Մուտք» պատուհանը, որտեղ անհրաժեշտ է լրացնել վավեր էլեկտրոնային փոստի հասցե, գաղտնաբառ և սեղմել «Գրանցվել» կոճակը, եթե առաջին անգամ է դիմում ներկայացվում վերոնշյալ կայքէջի միջոցով, իսկ եթե արդեն գրանցված է, անհրաժեշտ է սեղմել «Մուտք» կոճակը:

Հաջորդ քայլով անհրաժեշտ է բացված պատուհանի վերևի աջ անկյունում՝ «Իմ էջը» բաժնում («Ծանուցումներ» (զանգակ նշանի տեսքով է) բաժնի կողքը), լրացնել անձնական տվյալները և «Կրթություն», «Օտար լեզուներ», «Համակարգչային ծրագրեր» բաժինները, պարտադիր լրացման ենթակա բոլոր դաշտերը, կցել հայտարարության մեջ նշված անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճենները, լուսանկարը և սեղմել «Պահպանել փոփոխությունները» ստեղնը:

Լրացնելով «Իմ էջի» անձնական տվյալները, կցելով անհրաժեշտ փաստաթղթերը՝ անհրաժեշտ է արդեն իսկ գրանցված օգտատիրոջ էջում՝ «Մրցույթներ» բաժնում գտնել կոնկրետ

պաշտոնի համար անցկացվող մրցույթի մասին հրապարակված հայտարարությունը և «Գործողություններ» ենթաբաժնի ներքո նշված «Դիմել» ստեղնով ներկայացնել դիմումը, որից անմիջապես հետո քաղաքացին ստանում է ծանուցում դիմումն ընդունվելու մասին:

Դիմումի կարգավիճակի մասին տեղեկատվություն կարելի է ստանալ նաև օգտատիրոջ անձնական էջի «Մրցույթներ» բաժնի «Հայտարարություններ» ենթաբաժնում կոնկրետ պաշտոնի համար հայտարարված մրցույթի տողում «Գործողություններ» ենթաբաժնի ներքո գրառումից. նշված հատվածում՝

ա) եթե ակտիվ է «Դիմել» ստեղնը, ապա դիմումը դեռևս գրանցված չէ,

բ) եթե ակտիվ է «Իմ դիմումը» ստեղնը, ապա դիմումը ներկայացված է Քաղաքացիական ծառայության գրասենյակ, և այն ուսումնասիրման փուլում է,

գ) եթե ակտիվ է «Խմբագրել» ստեղնը, ապա անհրաժեշտ է խմբագրել դիմումը՝ շտկելով փաստաթղթերի թերություններն ու սխալները, և կրկին ներկայացնել այն:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է փաստաթղթերը հետ վերադարձվեն քաղաքացուն՝ խմբագրման համար: Նման դեպքում քաղաքացին պարտավոր է ծանուցումն ուղարկելուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում կրկին դիմել՝ վերացնելով փաստաթղթերի թերություններն ու ուղղելով սխալները, որոնց մասին քաղաքացին ծանուցվում է «Իմ էջի» «Ծանուցումներ» բաժնի և էլեկտրոնային փոստի միջոցով: Փաստաթղթերի թերությունների և սխալների մասին մեկնաբանությունը քաղաքացին կարող է տեսնել՝ բացելով «Իմ էջի» «Մրցույթներ» բաժնի համապատասխան հայտարարության հերթական համարից առաջ դրված ⊕ նշանը:

Փաստաթղթերը խմբագրելու համար անհրաժեշտ է այցելել «Անձնական էջ»-ի «Մրցույթներ» բաժնի «Հայտարարություններ» ենթաբաժին, ընտրել կոնկրետ պաշտոնի համար հրապարակված հայտարարությունը, «Գործողություններ» ենթաբաժնի ներքո նշված «Խմբագրել» կոճակը սեղմել, կատարել փոփոխությունները և ներքևում նշված «Դիմել» կոճակի միջոցով դիմումը կրկին ներկայացնել:

Համակարգում գրանցվելուց հետո քաղաքացին իր «Անձնական էջ» կարող է մուտք գործել՝ այցելելով https://cso.gov.am/ կայքէջի «Գլխավոր» էջի «Մուտք» բաժին կամ https://hartak.cso.gov.am/ հղումի «Անձնական էջ» բաժինը, որտեղ անհրաժեշտ է լրացնել գրանցված էլեկտրոնային փոստի հասցեն և գաղտնաբառը:

Մրցույթին մասնակցելու համար դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2021 թվականի նոյեմբերի 4-ի ժամը 24:00-ն:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2021 թվականի դեկտեմբերի 1-ին՝ ժամը 11:00-ին, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, վարչական շենք):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2021 թվականի դեկտեմբերի 3-ին՝ ժամը 11:00-ին, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, վարչական շենք):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 175 932 (հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

Սահմանադրություն. հոդվածներ՝ 1-8, 10, 13-18, 20-21, 25, 27, 31, 32, 35-38, 40-41, 44, 46-49, 51, 57, 58, 64, 66, 70, 72-73, 103, 179-180, 182-184, 186, 188

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք. հոդվածներ՝ 2, 4, 10, 12, 17, 22-23, 34,

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142147

«Հանրային ծառայության մասին» օրենք. 1, 4, 6, 9, 14, 17, 31, 53

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=150050

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենք. հոդվածներ՝ 10, 18, 20, 22-24, 38,
հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138910
«Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենք. հոդվածներ՝ 2, 4, 5, 7, 10-12, 21, 13,
հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=141302
Ընտանեկան օրենսգրք. հոդվածներ՝ 9, 51, 53-56, 58, 60, 63, 68, 109, 112-113, 115, 117, 129, 140,
հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152573
Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2012:
հղումը՝ http://fliphtml5.com/fumf/egdx
Ինֆորմատիկա 8-րդ դասարան: Հանրակրթական ավագ դպրոցի ընդհանուր և հումանիտար հոսքերի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2013:
հղումը՝ http://online.fliphtml5.com/fumf/irey/#p=2
Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ https://www.gov.am/am/announcements/item/346/ հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից, մասնավորապես՝
«Բարեվարքություն» կոմպետենցիա,
հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/3.pdf
«Խնդրի լուծում» կոմպետենցիա,
հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf
«Հաշվետվությունների մշակում» կոմպետենցիա,
հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf
Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, վարչական շենք, հեռախոսահամար՝ 0223-2-32-70, էլեկտրոնային փոստի հասցե՝ andznakazmkotayk@gmail.com):

Հավելված N 56
Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզպետարանի գլխավոր քարտուղարի
2019 թվականի սեպտեմբերի 23-ի N 313-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ,ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության Բաժնի ավագ մասնագետ (ծածկագիրը՝ 96-3.4-Մ3-2)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի ավագ մասնագետը ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Վարչական շենք:

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) իրականացնում է ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը Մարզում և մշակում ընտանիքների, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրեր.

2) իրականացնում է Մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերի, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի և հաջորդ տարվա իրականացվելիք միջոցառումների մշակումը.

3) իրականացնում է Մարզում կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) հիմնահարցերը, մշակում զոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրեր, և նախարարության միջոցով իրականացնում է Մարզում հայտնաբերված կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) զոհերի ուղղորդումը համապատասխան գերատեսչություններ և կառույցներ.

4) քննարկում է ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների կողմնորոշման խնդիրները, անհրաժեշտության դեպքում ուղղորդում համապատասխան հաստատություններ և պաշտպանում անչափահասների իրավունքներն ու շահերը.

5) ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ աշխատանքներ է իրականացնում իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) հետ.

6) իր իրավասությունների շրջանակներում իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների (նրանց ընտանիքների) կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն, ապահովում երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը.

7) օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, իր իրավասությունների շրջանակներում, իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի անհատական սոցիալական ծրագրի մշակումը, դրանով նախատեսված միջոցառումների իրականացումը, խմբային (բազմամասնագիտական) քննարկումները.

8) մասնակցում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգում վարման աշխատանքներին՝ դրանում հաշվառելով.

ա. առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց և սահմանված կարգով ներկայացնում նախարարություն.
բ. որդեգրել ցանկացող անձին (դրական եզրակացության հիման վրա) որպես որդեգրողի թեկնածու, տվյալները գրանցում է հաշվառման մատյանում, լրացնում որդեգրողի թեկնածուի անձնական քարտը և պատճենը փոխանցում է նախարարություն.
գ. որդեգրման ենթակա երեխաների մասին տվյալները և անձնական քարտի պատճենները ներկայացնում է նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու համար.
դ. խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձին (դրական եզրակացության հիման վրա) որպես խնամատար ծնողի թեկնածու, տվյալները գրանցում է հաշվառման մատյանում և լրացնում խնամատար ծնողի թեկնածուի անձնական քարտը և պատճենը փոխանցում է նախարարություն.
ե. մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասներին (ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող ծառայություններից ստացված տեղեկատվության համաձայն).
զ. հանրակրթությունից դուրս մնացած երեխաներին.
է. մանկուց հաշմանդամ երեխաներին.
ը. սոցիալապես անապահով ընտանիքների, բուժական հաստատություններում, բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունում գտնվող երեխաներին.
9) իրականացնում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ միջոցներ, պաշտոնատար անձանցից և այլ քաղաքացիներից ստացված, երեխայի կյանքի և առողջությանը սպառնալու նրա իրավունքների և շահերի խախտումների տեղեկատվության դեպքերում, ապահովում է առկա տարաձայնությունների լուծման աշխատանքները՝ ծնողական իրավունքի իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքերում՝ հաշվի առնելով երեխայի շահերը.
10) Բաժնի պետի հանձնարարությամբ ապահովում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների այն նիստերին մասնակցությունը, որտեղ քննարկվում են երեխայի հետ կապված հատուկ դեպքերը.
11) իրականացնում է հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանությունը.
12) հանրապետական մանկավարժահոգեբանական գնահատման կենտրոնի արդյունքների եզրակացության հիման վրա վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը.
13) իրականացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի և առանց ծնողական խնամքի մնացած երեխայի թվին պատկանող անձանց իրավունքների պաշտապանությունը, իրականացնում է տարածքային հաշվառումը, ապահովում է խնամակալության և հոգաբարձության մարմնի հետ փոխհամագործակցությունը.
14) իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող որդեգրել ցանկացող քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության որդեգրման ենթակա երեխաների տարածքային հաշվառում.
15) օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրում է խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձի խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն.
16) իրականացնում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխայի կենսաբանական ընտանիք վերադարձը՝ ծնողների (ծնողի) կամ ընտանիքի չափահաս այլ անդամի գրավոր դիմումի համաձայն.
17) իրականացնում է երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու և հաստատությունից դուրս գրելու գործընթացը.
18) ապահովում է ներկայացուցչականություն դատական այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի իրավունքներն ու շահերը.
19) դատարան է ներկայացնում ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ դիմումները.
20) աջակցում է երեխայի ծննդյան վկայականի ձեռքբերմանը՝ դրա բացակայության դեպքում:
Իրավունքները՝

1)մասնակցել այլ մարմինների և կազմակերպությունների կողմից ներկայացված ոլորտին առնչվող ծրագրային փաստաթղթերի և իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստմանը.

2) մասնակցել համապատասխան բնագավառին առնչվող օրենսդրության կիրառման պրակտիկայի և կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակմանը.

3) Բաժնի պետին, ըստ անհրաժեշտության, ներկայացնել առաջարկություններ՝ Բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

4) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցել Բաժնի առջև դրված գործառույթներից ու խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքներին.

5) Մասնակցել Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակմանը.

6) Բաժնի պետի միջոցով այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվությունների և նյութերի ստացում:

7)մասնակցել ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականության իրականացմանը Մարզում և ընտանիքների, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրերի մշակմանը.

8) մասնակցել Մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերի ուսումնասիրությանը և դրանց լուծմանն ուղղված ծրագրերի կազմանը.

9) մասնակցել կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) զոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրերի մշակմանը և համապատասխան գերատեսչություններ և կառույցներ ուղղորդելու աշխատանքներին.

10) մասնակցել մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների կողմնորոշման խնդիրների քննարկմանը, համապատասխան հաստատություններ ուղղորդմանը.

11) կատարել ուսումնասիրություն և ոստիկանության համապատասխան ծառայության ներկայացուցիչների հետ, կազմակերպել հակասոցիալական վարքագիծ դրսևորած ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) խնդիրների շուրջ մասնագիտական քննարկումներ.

12) մասնակցել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների (նրանց ընտանիքների) կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության աշխատանքներին, կազմել երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման ծրագրեր.

13) երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման ծրագրի շրջանակներում կազմակերպել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի անհատական, վերականգնողական, մասնագիտական աշխատանքներ.

14) մշակել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի անհատական սոցիալական ծրագիր, կազմակերպել ծագած խնդիրների լուծման համար անհրաժեշտ միջոցառումներ՝ անհատական և խմբային (բազմամասնագիտական) քննարկումների միջոցով.

15) մասնակցել Հայաստանի Հանրապետության որդեգրողի թեկնածուների, որդեգրման ենթակա երեխաների և խնամատար ծնողների տվյալները մուտքագրմանը, խմբագրմանը, դիտարկմանը, որոնմանը և պահպանմանը «Մանուկ» տեղեկատվական համակարգում.

16) մասնակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքների գնահատմանը և «Մանուկ» տեղեկատվական համակարգ մուտքագրմանը.լ

17)մասնակցել համապատասխան մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա երեխայի իրավական կարգավիճակը «Մանուկ» տեղեկատվական համակարգում փոփոխմանը, տվյալների թարմացմանը լ և պահպանմանը.

18) պաշտոնատար անձանցից և այլ քաղաքացիներից ստացված, երեխայի կյանքի և առողջությանը սպառնալու նրա իրավունքների և շահերի խախտումների տեղեկատվության դեպքերում ձեռնարկել միջոցներ՝ երեխայի շահերի ու պաշտպանության համար.

19) համագործակցող կողմերի ներկայացուցիչների հետ կազմակերպել մասնագիտական քննարկումներ՝ ծնողական իրավունքի իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ

համաձայնության բացակայության դեպքերում, անհրաժեշտ տեղեկատվություն, մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ ստանալու նպատակով.
20) ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն երեխային ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան, վերցնելու և երեխայի ժամանակավոր տեղավորումն անհապաղ ապահովելու հարցում.
21) մասնակցել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի հետ կապված հատուկ դեպքերը, ցուցաբերել մասնագիտական աջակցություն խնամակալության և հոգաբարձության մարմնին.
22) վերականգնել հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքը՝ նրանց ներգրավելով հանրակրթական կամ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում.
23)մասնակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանության իրականացմանը.
24) աջակցել վկայագրված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ ուսումնական հաստատություններ ընդգրկվելու գործընթացին՝ նրանց ներգրավելով հանրակրթական կամ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում.
25) իրականացնել առանց ծնողական խնամքի մնացած երեխայի և առանց ծնողական խնամքի մնացած երեխայի թվին պատկանող անձանց կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն.
26) առանց ծնողական խնամքի մնացած երեխայի մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ներկայացված փաստաթղթերի և առանց ծնողական խնամքի մնացած երեխայի հետագա խնամքը տրամադրելու (բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու կամ կենսաբանական ընտանիք վերադարձնելու, կամ որդեգրման հանձնելու կամ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու նպատակահարմարության) վերաբերյալ սոցիալական աջակցության տարածքային գործակալության տրամադրած նախնական եզրակացության լրիվ, օբյեկտիվ և համակողմանի ուսումնասիրության և ստացված փաստաթղթերի ու տեղեկատվության համադրման, վերլուծության արդյունքում կազմել եզրակացություն՝ երեխայի հետագա խնամքը տրամադրելու (բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու կամ կենսաբանական ընտանիք վերադարձնելու, կամ որդեգրման հանձնելու կամ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու նպատակահարմարության) մասին.
27) Բաժնի պետի հանձնարարությամբ որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացուց ստացված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի և սոցիալական աջակցության տարածքային գործակալության կողմից տրված՝ որդեգրել ցանկացող անձ հաշվառելու վերաբերյալ նախնական եզրակացության հիման վրա, կատարել կենսապայմանների ուսումնասիրություն և որդեգրել ցանկացող անձին տալ որդեգրելու հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն.
28) խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձից օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո և սոցիալական աջակցության տարածքային գործակալության կողմից տրված՝ խնամատար ծնող հաշվառելու վերաբերյալ եզրակացության հիման վրա, կատարել կենսապայմանների ուսումնասիրություն.
29) խնամատար ընտանիքում երեխայի խնամքը և դաստիարակությունը իրականացնելու նպատակով, օրենքով սահմանված կարգով, պատրաստել երեխայի խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու մասին պայմանագիր և ներկայացնել հաստատման.
30) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխային ծնողների (ծնողի) կամ ընտանիքի չափահաս այլ անդամի գրավոր դիմումի դեպքում և կատարած ուսումնասիրության արդյունքում տալ համապատասխան եզրակացություն (դրական կամ բացասական)՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից դուրս գրման մասին.
31) երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու հնարավորության մասին առաջարկությունը և օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ

այլ փաստաթղթերը սոցիալական աջակցության տարածքային գործակալության կողմից ստանալուց հետո, խնամքի տրամադրում հայցող երեխայի ընտանիքի՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված լինելու և սոցիալապես անապահով լինելու դեպքում ուսումնասիրել բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունում երեխայի տեղավորելու այլընտրանքային տարբերակները.
32) երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու հնարավորության համար բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունում երեխայի տեղավորելու այլընտրանքային տարբերակների բացակայության դեպքում ներկայացնել գրավոր եզրակացություն երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու վերաբերյալ.
33) մինչև երեխայի 18 տարին լրանալը, բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունից նրա դուրսգրման մասին երեխայի ծնողների (ծնողի) կամ օրինական այլ ներկայացուցչի գրավոր դիմումի դեպքում, կատարած ուսումնասիրության արդյունքում իրականացնել համապատասխան եզրակացության տրամադրման աշխատանքներ.
34) մինչև երեխայի 18 տարին լրանալը բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունից նրա դուրսգրման մասին տրված եզրակացության մեկական օրինակները ուղարկել լիազոր պետական մարմին և սոցիալական աջակացության տարածքային գործակալություն.
35) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է երեխայի իրավունքների պաշտպանության գործունեության մասին տարեկան հաշվետվության կազմանը.
36) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովին՝ բաժնի գործունեության մասին տարեկան հաշվետվության կազմանը:
Պարտականությունները՝
1)համապատասխան ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ Բաժնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ փաստաթղթեր.
2) Բաժնի պետի հանձնարարությամբ ապահովել Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակումը.
3) Մասնակցել համապատասխան ոլորտի ռազմավարական ծրագրերի, հայեցակարգերի, օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին.
4) այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանալ Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.
5) Բաժնի պետին, ըստ անհրաժեշտության, ներկայացնել զեկուցագրեր իր գործառույթներին առնչվող համապատասխան մարմիններում կատարվող աշխատանքների մասին:
6) վարել ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը և ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրերի իրականացումը Մարզում.
7) ներկայացնել տեղեկատվություն կատարված աշխատանքների մասին.
8) Մարզում հայտնաբերված կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգի) զոհերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել նախարարությանը և ոստիկանությանը.
9) պաշտպանել մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների իրավունքներն ու շահերը.
10) ոստիկանությունից ստացված տեղեկատվության հիման վրա վարել հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) տվյալների շտեմարան.
11) երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման ծրագրով սահմանված ժամկետներում աջակցել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխային և նրա ընտանիքին.
12) կատարել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի և նրա ընտանիքի կենսապայմանների ուսումնասիրություն.
13) ստացված տեղեկատվության արդյունքների վերաբերյալ առաջարկություն ներկայացնել

համագործակցող և շահագրգիռ մարմիններին, անհրաժեշտության դեպքում ցուցաբերել մասնագիտական աջակցություն.
14) մասնակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և որդեգրման ենթակա երեխաների, որդեգրողի և խնամատար ծնողի թեկնածուների տվյալների էլեկտրոնային հաշվառմանը և բազայի վարմանը.
15) մասնակցել տեղեկատվական համակարգում հաշվառվածների անհատական տվյալների դիտարկմանը, որոնմանը, խմբագրմանը և տեղեկատվական բազա մուտքագրմանը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրերի պարբերաբար թարմացմանը.
16) մասնակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավական կարգավիճակի փոփոխման տվյալների «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգ ներառմանը.
17) մասնակցել «Մանուկ» տեղեկատվական համակարգի տեղեկատվական բազայի և այլ տեղեկատվական բազաների տվյալների համադրմանը.
18) երեխայի կյանքի և առողջությանը սպառնալու նրա իրավունքների և շահերի խախտումների տեղեկատվության դեպքերում պաշտպանել երեխայի իրավունքներն ու շահերը.
19) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նիստերին.
20) կատարել հանրակրթությունից դուրս մնացած երեխայի կենսապայմանների ուսումնասիրություն և կարիքների գնահատում.
21) ներկայացված փաստաթղթերի հիման վրա պատրաստել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին տրամադրվող վկայագիր.
22) օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ներկայացված փաստաթղթերի և առանց ծնողական խնամքի մնացած երեխայի հետագա խնամքը տրամադրելու (բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու կամ կենսաբանական ընտանիք վերադարձնելու, կամ որդեգրման հանձնելու կամ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու նպատակահարմարության) վերաբերյալ սոցիալական աջակցության տարածքային գործակալության տրամադրած նախնական եզրակացության լրիվ, օբյեկտիվ և համակողմանի ուսումնասիրություն.
23) սահմանված ժամկետներում և կարգով համապատասխան մարմիններին ներկայացնել առանց ծնողական խնամքի մնացած երեխայի հետագա խնամքի տրամադրման (բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու կամ կենսաբանական ընտանիք վերադարձնելու, կամ որդեգրման հանձնելու կամ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու նպատակահարմարության) մասին տեղեկատվություն.
24) օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում տրամադրել տեղեկատվություն խնամակալության և հոգաբարձության մարմնին առանց ծնողական խնամքի մնացած երեխայի բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում երեխայի խնամքի տրամադրման ողջ ժամանակահատվածում, երեխային ընտանիքում տեղավորելու հնարավորության մասին, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության գտնվելու վայրի մասին.
25) տրամադրել որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացուն որդեգրելու հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն.
26) օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում դրական եզրակացություն տրամադրելու դեպքում. հաշվառել որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացուն,
27) օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում տալ խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն.
28) օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել խնամատար ընտանիքում տեղավորված երեխայի կյանքի, առողջության, դաստիարակության և կենսապայմանների վերահսկողություն՝ երեխայի, խնամատար ծնողի հետ պարբերաբար հանդիպումների և հարցազրույցների,

խնամատար ընտանիք պարբերաբար այցելությունների, մշտադիտարկման (մոնիտորինգ), տեղում ուսումնասիրություն իրականացնելու միջոցով.
29) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխային հաստատությունից դուրս գրման մասին դրական եզրակացության դեպքում դրա մեկական օրինակներն ուղարկել նախարարություն և տվյալ ընտանիքի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին.
30) երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու համար, օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ այլ փաստաթղթերը սոցիալական աջակցության տարածքային գործակալության կողմից ստանալուց հետո, խնամքի տրամադրում հայցող երեխայի ընտանիքի՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված լինելու և սոցիալապես անապահով լինելու դեպքում, ուսումնասիրել բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունում երեխային տեղավորելու այլընտրանքային տարբերակները.
31) նախարարությանը տրամադրել բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունում երեխային ուղեգրելու վերաբերյալ տրված գրավոր եզրակացությունը և անհրաժեշտ փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված ժամկետում.
32) գրավոր նախազգուշացնել տալիս բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն տեղավորվող երեխայի ծնողներին կամ օրինական ներկայացուցչին այն մասին, որ տվյալ հաստատությունում երեխայի հանդեպ օրենքով նախատեսված պարտականությունները չկատարելու դեպքում, օրենդրությամբ սահմանված կարգով կարող է կիրառվել երեխայի հետագա խնամքի տրամադրման այլընտրանքային ձևերից որևէ մեկը.
33) երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունից դուրս գրելու համար կատարել ուսումնասիրություն և տալ եզրակացություն.
34) Բաժնի պետին, ըստ անհրաժեշտության, ներկայացնել զեկուցագրեր՝ համապատասխան մարմիններում իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող աշխատանքների վիճակի մասին.
35) իրականացնել քաղաքացիների ընդունելություն և կազմակերպել մասնագիտական խորհրդատվություն (իրավաբանական, սոցիալական, հոգեբանական, բժշկական, մանկավարժական):

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

բարձրագույն կրթություն

1.	Ուղղություն	Կրթություն
2.	Ոլորտ	Կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ սոցիալական աշխատանքի բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Կոնֆլիկտների կառավարում
2. Բողոքների բավարարում
3. Ժամանակի կառավարում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում

6. Փաստաթղթերի նախապատրաստում:
4.Կազմակերպական շրջանակ **4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը** Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար: **4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները** Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում: **4.3. Գործունեության ազդեցությունը** Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն: **4.4. Շփումները և ներկայացուցչությունը** Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում: **4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը** Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ

Թեստային առաջադրանքի ձևերը	**Հարցը կամ խնդիրը**	**Օրինակ**
1. Ճիշտ պատասխանի ընտրություն	Նշեք ճիշտ պատասխանը	Անհատի կողմից արտահայտվող առանձնահատուկ և համեմատաբար կայուն վարքի, մտածողության և զգացմունքների կառուցվածքը՝ Ա. Անհատականություն Բ. Գիտակցություն Գ. Բնավորություն Դ. Խիզախություն
2. Այլընտրանքային ընտրություն	Պատասխանեք «Այո» կամ «Ոչ»	Ճի՞շտ է, արդյոք, որ Հայաստանի Հանրապետության տարածքում ամենաբարձր լեռը Արարատն է: Պատասխան՝ «Այո» «Ոչ»
3. Համապատաս-խանության որոշում	Դասավորեք ըստ համապատասխանության՝ ձախ սյունակի եզրույթները և աջ սյունակի մեկնաբանությունները	1. Կառավարում՝ Ա. Աշխատողների աշխատանքի գնահատում և շտկում՝ սահմանված նպատակներին համապատասխան. 2. Հսկողություն՝ Բ. Կազմակերպությունում աշխատող մարդկանց գործունեության ակտիվացմանը միտված գործողություն 3. Շահադրդում՝ Գ. Վարչարարական գործառույթների իրականացման գործընթաց Պատասխան՝ 1) 1-Ա, 2-Բ, 3-Գ 2) 1-Բ, 2-Գ, 3-Ա 3) 1-Գ, 2-Ա, 3-Բ
4. Հաջորդակա-նության որոշում	Դասավորեք ճիշտ հերթականությամբ	Դասավորեք շաբաթվա օրերը ճիշտ հերթականությամբ՝ Ա. կիրակի Բ. երեքշաբթի Գ. շաբաթ Դ. երկուշաբթի Պատասխան՝ 1) Ա, Բ, Գ, Դ 2) Դ, Բ, Գ, Ա 3) Գ, Դ, Ա, Բ